

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ






ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2010 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն	արձակուրդում է	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Հակոբյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		03.08.2010թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռապիթ Հարությունյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ		03.08.2010թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ	արձակուրդում է	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գարիկ Ադամյան	Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ		03.08.2010թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ակտիվներ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 42,678,919 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 14,616,271 հազ. ՀՀ դրամով կամ 52.1%-ով, իսկ 31.12.09թ.-ի համեմատ նվազել են 787,090 հազ. ՀՀ դրամով կամ 1.8%-ով:

Նշված ժամանակահատվածների համեմատ հաշվետու եռամսյակի ակտիվների մեծության փոփոխությունները բնորոշ են ֆինանսական տարվա այդ ժամանակահատվածի գործարար ակտիվության համար:

2010 թվականի 2-րդ եռամսյակի ավարտին, նախորդ տարվա 2-րդ եռամսյակի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների՝ 9,168,869 հազ. ՀՀ դրամ կամ 78.0%, ինչպես նաև բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների (6,144,100 հազ. դրամով կամ 3.6 անգամ) աճով:

Նախորդ տարվա տարեվերջի համեմատ, Բանկի ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 8,341,561 հազ. ՀՀ դրամ կամ 51.3%, և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ 1,425,624 հազ. ՀՀ դրամով կամ 29.0%-ով, նվազմամբ:

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների մնացորդները կազմել են 20,923,305 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 9,168,869 հազ. ՀՀ դրամով կամ 78.0%-ով, իսկ 31.12.09թ.-ի համեմատ՝ 4,827,115 հազ. ՀՀ դրամով կամ 30.0%-ով:

2010թ. 2-րդ եռամսյակում Բանկի կողմից տրամադրված վարկերի աճը պայմանավորված է ՀՀ տնտեսության որոշակի ակտիվացմամբ և որպես հետևանք՝ գործող և նոր հաճախորդների կողմից ֆինանսական միջոցների հանդեպ սպառողական և բիզնես վարկավորման հիման վրա առաջացած պահանջմունքով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրվել է 12,030,945 հազ. ՀՀ դրամի վարկ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում՝ 4,667,309 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և գերակշռող մասը դասակարգված են որպես ստանդարտ վարկեր: Այս ցուցանիշը վկայում է վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների մնացորդները կազմել են 3,497,557 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 826,135 հազ. ՀՀ դրամով կամ 30.9%-ով, իսկ 31.12.09թ. համեմատ նվազել է 1,425,624 հազ. ՀՀ դրամով կամ 29.0%-ով:

31.12.09թ.-ի համեմատ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազումը պայմանավորված է միջոցներն առավել բարձր եկամտաբերությամբ ակտիվներում տեղաբաշխելու քաղաքականությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 14,765,669 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 21,935,996 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Արտարժույթային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 98,529.5 հազ. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 408,094.8 հազ. ՌԴ ռուբլի,

Եվրո գործարքների ծավալը՝ 45,356.7 հազ. եվրո:

Վերը նշված արտարժույթային գործառնությունների արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 107,033 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 78,230 հազ. ՀՀ դրամի դիմաց: Արձանագրված աճը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ արտարժույթային գործառնությունների շուկայում գործարքների ծավալների և տնտեսական ակտիվության աճով:

Պարտավորություններ և կապիտալ

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի պասիվների աճը (14,616,271 հազ. ՀՀ դրամով կամ 52.1%-ով) պայմանավորված է պարտավորությունների՝ (12,704,419 հազ. ՀՀ դրամով կամ 62.1%-ով) և ընդհանուր կապիտալի (1,911,852 հազ. ՀՀ դրամով կամ 25.1%-ով) աճով:

Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդների նկատմամբ պարտավորությունների (7,126,322 հազ. ՀՀ դրամ կամ 47.6%) և բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների (5,649,367 հազ. ՀՀ դրամ կամ 115.5%) աճով: Ընդ որում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 2,589,871 հազ. ՀՀ դրամով կամ 68.8%-ով:

31.12.09թ.-ի համեմատ, Բանկի պասիվների նվազումը 787,090 հազ. ՀՀ դրամով կամ 1.8%-ով, պայմանավորված է պարտավորությունների (2,365,956 հազ. ՀՀ դրամով կամ 6.7%-ով) նվազմամբ: Միևնույն ժամանակ, Բանկի ընդհանուր կապիտալն աճել է 1,578,866 հազ. ՀՀ դրամով կամ 19.9%-ով:

Պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված է հաճախորդների նկատմամբ պարտավորությունների նվազմամբ, որը կազմել է 3,614,810 հազ. ՀՀ դրամ կամ 14.1%:

Ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 2,636,723 հազ. ՀՀ դրամով կամ 70.9%-ով՝ կազմելով 6,352,041 հազ. ՀՀ դրամ:

Կապիտալ

Հաշվետու եռամսյակում Բանկի ընդհանուր կապիտալի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պայմանավորված է չբաշխված շահույթի ավելացմամբ՝ 923,474 հազ. ՀՀ դրամ կամ 81.4%, և հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կանոնադրական կապիտալի համալրմամբ՝ 600,000 հազ. դրամ, ինչպես նաև տեղաբաշխման աղյուսքում ստացված էմիսիոն եկամտով՝ 420,000 հազ. դրամ:

31.12.09թ. համեմատ, Բանկի ընդհանուր կապիտալի աճը նույնպես պայմանավորված է չբաշխված շահույթի ավելացմամբ՝ 601,520 հազ. ՀՀ դրամ կամ 41.3%, ինչպես նաև վերը նշված կապիտալի համալրմամբ:

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 449,086 հազ. ՀՀ դրամով կամ 87.2%-ով՝ կազմելով 963,857 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների գերակշռող մասը բաժին է ընկնում վարկային ներդրումներից ստացված եկամուտներին (760,286 հազ. ՀՀ դրամ կամ 78.9%) և արժեթղթերից ստացված եկամուտներին (193,521 հազ. ՀՀ դրամ կամ 20.1%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից զուտ եկամուտները կազմել են 102,662 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 41,106 հազ. ՀՀ դրամով կամ 66.8%-ով:

Արտարժույթային գործառնություններից ստացված զուտ շահույթն աճել է 28,803 հազ. ՀՀ դրամով կամ 36.8%-ով՝ կազմելով 107,033 հազ. ՀՀ դրամ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է հաշվետու եռամսյակի և նախորդ երկու տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

հազ. ՀՀ դրամ	2008թ. 2-րդ եռամսյակի համար	2009թ. 2-րդ եռամսյակի համար	2010թ. 2-րդ եռամսյակի համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	513,538	514,771	963,857
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(149,314)	(268,560)	(374,648)
Զուտ տոկոսային եկամուտ	364,224	246,211	589,209
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	70,264	80,468	135,621
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(13,727)	(18,912)	(32,959)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	56,537	61,556	102,662
Արտարժույթային գործառնություններից զուտ շահույթ/ (վնաս)	73,292	78,230	107,033
Վաճառքի նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս)	18,395	-13,126	22,201
Այլ եկամուտ	10,521	12,564	12,137
Գործառնական եկամուտ	522,969	385,435	833,242
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	(14,210)	12,578	(11,327)
Անձնակազմի գծով ծախսեր	(118,198)	(164,825)	(199,461)
Հիմնական միջոցների մաշվածություն	(29,337)	(38,873)	(47,405)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(1,965)	(1,965)	(2,229)
Այլ ծախսեր	(129,478)	(134,902)	(187,701)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	229,781	57,448	385,119
Շահութահարկի գծով ծախս	(41,623)	17	(67,553)
Շահույթ հարկումից հետո	188,158	57,465	317,566

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 374,648 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 106,088 հազ. ՀՀ դրամով կամ 39.5%-ով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում հաճախորդների հաշիվների դիմաց վճարված տոկոսային ծախսերին, որոնք կազմել են 316,476 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի անձնակազմի գծով ծախսերն աճել են 34,636 հազ. ՀՀ դրամով կամ 21.0%-ով՝ կազմելով 199,461 հազ. ՀՀ դրամ, հիմնական միջոցների մաշվածության ծախսերն աճել են 8,532 հազ. ՀՀ դրամով կամ 21.9%-ով՝ կազմելով 47,405 հազ. ՀՀ դրամ, ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը՝ 264 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 2,229 հազ. ՀՀ դրամ:

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկը ձևավորել է 317,566 հազ. ՀՀ դրամի շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 57,465 հազ. ՀՀ դրամի դիմաց, իսկ կիսամյակի արդյունքներով՝ 621,520 հազ. դրամ :

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են՝
ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 3.73%,
ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 0.69%:

Հաշվետու եռամսյակի 317,566 հազ. ՀՀ դրամ շահույթի ձևավորման արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել 289 ՀՀ դրամ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 54 դրամ շահույթ մեկ բաժնետոմսի դիմաց:

Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալների աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, որն իր արդյունքներով արտացոլվում է կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված եկամուտներում, կազմել է 55,153 հազ. ՀՀ դրամ կամ 68.5%:

Վճարահաշվարկային գործառնությունների ծավալային աճ ապահովող ծառայություններից է հանդիսանում կոմունալ վճարումների հավաքագրումը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 154,439 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 626,926 հազ. դրամ:

2010 թվականի հունիսի 30-ի դրությամբ Բանկի հաճախորդների թվաքանակը կազմել է 78,060, որը 2009 թ. հունիսի 30-ի համեմատ աճել է 30,630-ով:

Վճարահաշվարկային գործառնություններ

Չեկեր

Հաշվետու միջանկյալ ժամանակահատվածում Բանկը շարունակել է իրականացնել չեկերի տրամադրման և սպասարկման գործառնությունները: Հաշվետու ժամանակաշրջանում Բանկն American Express TC ընկերության հետ ակտիվ համագործակցության շրջանակներում տրամադրել է 153 հատ ճանապարհային չեկ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 35 հատի դիմաց: Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է նաև 6 հատ բանկային չեկ:

Ակրեդիտիվներ և միջազգային երաշխիքներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում Բանկը սպասարկել է 838,950 ԱՄՆ դոլար գումարի ակրեդիտիվներ, որից 362,220 ԱՄՆ դոլարի գումարը տրամադրվել է EBRD-ի հետ իրականացվող

առևտրի խթանման ծրագրի շրջանակներում:

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 30,849,565 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 18,616,005 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն աճել է 3,460 հատով, որից 1,900-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, իսկ 1,560-ը՝ MasterCard միջազգային պլաստիկ քարտերին: Հաշվետու եռամսյակի ավարտին պլաստիկ քարտերի քանակը կազմել է 45,017 հատ:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ, ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2008 թվ., 2 եռ.	2009 թվ., 2 եռ.	2010 թվ., 2 եռ.
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	188,158	57,465	317,566
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,888,227	7,536,372	8,520,304
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	3.85	0.76	3.73
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	188,158	57,465	317,566
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	26,622,092	28,786,767	45,957,113
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.71	0.20	0.69
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	188,158	57,465	317,566
Գործառնական եկամուտ	522,969	385,435	833,242
Զուտ շահույթի մարժա (NPM), %	35.98	14.91	38.11
Գործառնական եկամուտ	522,969	385,435	833,242
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	26,622,092	28,786,767	45,957,113
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	1.96	1.34	1.81
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	26,622,092	28,786,767	45,957,113
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,888,227	7,536,372	8,520,304
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.45	3.82	5.39
Զուտ տոկոսային եկամուտ	364,224	246,211	589,209
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	18,264,677	19,297,424	33,633,027
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	1.99	1.28	1.75
Տոկոսային եկամուտ	513,538	514,771	963,857
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	18,264,677	19,297,424	33,633,027
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	2.81	2.67	2.87
Տոկոսային ծախսեր	149,314	268,560	374,648
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են	12,564,225	19,709,263	24,429,888

տոկոսային ծախսեր			
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	1.19	1.36	1.53
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	188,158	57,465	317,566
Բաժնետոմսերի միջին կշռված քիվը, հազ. հատ	774	1,072	1,099
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), հազ. ՀՀ դրամ	243	54	289
Սպրեդ, %	1.62	1.30	1.33

Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով և չափանիշներով և դիտարկվում են հետևյալ ցուցանիշների աճի մակարդակներով.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների շարունակական աճի ապահովում` հիմնականում վարկային ներդրումների աճի հաշվին,
- Ժամկետային ավանդների մնացորդների և ցպահանջ ավանդների մնացորդների աճի ապահովում,
- Բանկի հաճախորդների թվի շարունակական աճի, ինչպես նաև սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,
- Վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում` պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով նախատեսվում է ընդլայնել համագործակցող կազմակերպությունների շրջանակները, ավելացնել Բանկի քարտապանների թիվը, որի ապահովման նպատակով կավելացվի նաև ATM-երի թիվը և տեղաբաշխվածության մակարդակը,
- Նոր մասնաճյուղերի ստեղծում ՀՀ այն տարածաշրջաններում, որտեղ Բանկի մասնաճյուղերի ստեղծումը համարվում է ռազմավարական նշանակություն ունեցող և Բանկի զարգացման համար անհրաժեշտ քայլ,
- Եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ,
- Վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ:




23 հուլիսի 2010թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 439/Ա

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ՕՍԻԱՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Գործադիր տնօրեն Աշոտ Օսիայանին տրամադրել 10.10.2008–10.10.2009թ.թ.-ն ընկած ժամանակաշրջանի համար չօգտագործված արձակուրդի 17 օրերը և 10.10.2009–10.10.2010թ.թ.-ն ընկած ժամանակաշրջանի համար հասանելիք արձակուրդի 32 օրերից 15 օր՝ ս.թ.-ի հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 26-ը ներառյալ:
Հիմք՝ Ա. Օսիայանի դիմումը:
2. Գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը ս.թ.-ի հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 26-ը ներառյալ դնել գործադիր տնօրենի առաջին տեղակալ՝ Արթուր Հակոբյանի վրա:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գործադիր տնօրեն՝



Ա. Օսիայան



22 հուլիսի 2010թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 435/Ա

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխավոր հաշվապահ Տիգրան Գալստյանին տրամադրել 08.06.2009-08.06.2010թ.թ.-ն ընկած ժամանակաշրջանի համար հասանելի արձակուրդի 32 օրերից 15 օր՝ ս.թ.-ի հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 09-ը ներառյալ:

Հիմք՝ Տ. Գալստյանի դիմումը՝ համապատասխան մակագրությունով:

2. Տիգրան Գալստյանի՝ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, նրա պարտականությունների կատարումը դնել գլխավոր հաշվապահի տեղակալ, Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ Գայանե Սարգսյանի վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գործադիր տնօրեն՝



Ա. Օսիպյան

Միջանկյալ հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01.04.10թ.-ից - 30.06.10թ. ժամանակաշրջանի համար (չստուգված)	30.06.2010թ-ի վեց ամիսների համար (չստուգված)	01.04.09թ.-ից - 30.06.09թ. ժամանակաշրջանի համար (չստուգված)	30.06.2009թ-ի վեց ամիսների համար (չստուգված)	
Տոկոսային և նմանառիչ եկամուտներ	6	963,857	1,784,473	514,771	1,025,792	
Տոկոսային և նմանառիչ ծախսեր	6	(374,648)	(712,611)	(268,560)	(513,892)	
Զուտ տոկոսային և նմանառիչ եկամուտ		589,209	1,071,862	246,211	511,900	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	135,621	230,925	80,468	152,066	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(32,959)	(61,735)	(18,912)	(50,914)	
Ստացված գուտ կոմիսիոն և այլ վճարներ		102,662	169,190	61,556	101,152	
Արտարժույթային գործարքներից գուտ շահույթ		107,033	188,255	78,230	126,978	
Վաճառքի համար մատչելի ներդրումներից գուտ եկամուտ		22,201	115,949	(13,126)	4,683	
Այլ եկամուտներ	8	12,137	24,812	12,564	27,960	
Զուտ մասնամուծների ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	9	(11,327)	(50,373)	12,578	1,669	
Աճմանկազմի գծով ծախս	10	(199,461)	(385,385)	(164,825)	(332,437)	
Հիմնական միջոցների մաշվածություն	18	(47,405)	(91,456)	(38,873)	(76,507)	
Ոչ նյութական ակտիվների մաշվածություն	19	(2,229)	(4,321)	(1,965)	(3,929)	
Այլ ծախսեր	11	(187,701)	(307,904)	(134,902)	(311,543)	
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		385,119	730,629	57,448	49,926	
Շահութահարկի գծով ծախս	12	(67,553)	(109,109)	17	(6,464)	
Շահույթը (վնասը) հարկումից նետ		317,566	621,520	57,465	43,462	
Այլ համապարփակ եկամուտ						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված գուտ օգուտ		35,273	(19,654)	(75,669)	51,099	
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված գուտ օգուտ		(26,274)	(42,488)	(12,099)	(12,429)	
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ		(512)	(512)	14,628	(10,734)	
Տարվա այլ համապարփակ եկամուտ առանց հարկերի		8,487	(62,654)	(73,140)	27,936	
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		326,053	558,866	(15,675)	71,398	
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ						
Թափային			0.29	0.57	0.05	0.04

Բանկի կորպորատիվ նախագահ

 Ա.ՍՄԻՊՅԱՆ

 ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
 ARARATBANK
 02500518
 Գլխավոր կաշիպահ

 Տ.ԳՎԵՍՅԱՆ

Միջանկյալ հաշվետվություն ֆինանսական դրության մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանրա- գրություններ	30.06.2010թ.-ի դրությամբ (շտուգված)	31.12.2009թ.-ի դրությամբ (ստուգված)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	14	7,927,398	16,268,959
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	8,541,654	4,721,252
Հաճախորդներին այրված վարկեր և այլ փոխառվածություններ	16	20,923,305	16,096,190
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	3,497,557	4,923,181
Հետգնման պայամանագրերով գրավադրված արժեթղթեր	26	-	-
Հիմնական միջոցներ	18	1,459,274	1,153,515
Ոչ նյութական ակտիվներ	19	48,073	46,407
Հետաձգված հարկային ակտիվներ	12	12,382	-
Վաճառքի համար պահվող ակտիվներ		45,448	45,448
Այլ ակտիվներ	20	223,828	211,057
Ընդամենը՝ ակտիվներ		42,678,919	43,466,009
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	21	10,542,336	9,412,771
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	22	22,110,846	25,725,656
Բանկի կողմից բողոքված արժեթղթեր	23	250,342	250,205
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	-	6,172
Այլ պարտավորություններ	24	247,543	122,219
Ընդամենը՝ պարտավորություններ		33,151,067	35,517,023
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	26	5,962,005	5,362,005
Եմիսիոն եկամուտ		1,186,001	766,001
Գլխավոր պահուստ		320,000	300,000
Այլ պահուստներ		2,046	64,700
Զբաղիված շահույթ (վնաս)		2,057,800	1,456,280
Ընդամենը՝ կապիտալ		9,527,852	7,948,986
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		42,678,919	43,466,009

Բանկի վարչության նախագահ

Ա.ՕՍԻՊՅԱՆ

ԿՏ

Գլխավոր հաշվապահ

ԿԱԼՄՅԱՆ



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռ 01.01.2009թ. դրությամբ(ստուգված)	5,362,005	766,001	270,000	25,732	1,120,864	7,544,602
Հատկացում պահուստին	-	-	30,000	-	(30,000)	-
<i>Սեփականատերերի հետ գործարքներ</i>	-	-	30,000	-	(30,000)	-
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ	-	-	-	-	43,462	43,462
<i>Այլ համապարփակ եկամուտ</i>						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակաժ գուտ օգուտ	-	-	-	51,099	-	51,099
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված գուտ օգուտ	-	-	-	(12,429)	-	(12,429)
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(10,734)	-	(10,734)
<i>Ընդամենը համապարփակ եկամուտ</i>	-	-	-	27,936	43,462	71,398
Հաշվեկշիռ 30.06.2009թ. դրությամբ(չստուգված)	5,362,005	766,001	300,000	53,668	1,134,326	7,616,000
Հաշվեկշիռ 01.01.2010թ. դրությամբ(ստուգված)	5,362,005	766,001	300,000	64,700	1,456,280	7,948,986
Բաժնետիրական կապիտալի ավելացում	600,000	-	-	-	-	600,000
Էմիսիոն եկամուտ	-	420,000	-	-	-	420,000
Հատկացում պահուստին	-	-	20,000	-	(20,000)	-
<i>Սեփականատերերի հետ գործարքներ</i>	600,000	420,000	20,000	-	(20,000)	1,020,000
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ	-	-	-	-	621,520	621,520

Այլ համապարփակ եկամուտ						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ	-	-	-	(19,654)	-	(19,654)
Վաճառքի հմար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	(42,488)	-	(42,488)
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(512)	-	(512)
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	-	(62,654)	621,520	558,866
Հաշվեկշիռ 30.06.2010թ. դրությամբ(չստուգված)	5,962,005	1,186,001	320,000	2,046	2,057,800	9,527,852

48

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.2010թ.



Վարչական վարչության նախագահ
 Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ
 Ն.ՏՆԱՍՅԱՆ

Միջանկյալ հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զ.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ընտրա- գրություն	30.06.2010թ-ին ավարտված վեց ամիսների համար (չառուված)	30.06.2009թ-ին ավարտված վեց ամիսների համար (չառուված)
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ մինչև հարկումը		730,629	49,926
Շշտումներ		-	-
Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս		50,373	23,487
Մաշվածություն և ամորտիզացիան ծախսումներ		95,777	80,436
Հիմնական միջոցների վաճառքից շահույթ		(5,970)	(3,849)
Ստացվելիք տոկոսներ		(29,549)	(63,378)
Վճարվելիք տոկոսներ		55,846	37,919
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթային փոխարկումներից գուտ վնաս		(35,136)	113,058
Դրամական միջոցների գուտ հասքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փափախությունը		861,970	237,599
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)			
Դեպոզիտային միջոցներ ՀՀ և ԵՄ-ում		387,124	210,342
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		(4,701,645)	94,434
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ		(5,433,661)	679,765
Այլ ակտիվներ		(32,257)	(73,488)
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		514,792	1,316,492
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		(2,493,887)	(4,439,856)
Այլ պարտավորություններ		(21,735)	(434,981)
Ձուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		(10,919,299)	(2,409,693)
Վճարված շահութահարկ		(197,114)	(77,006)
Ձուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		(11,116,413)	(2,486,699)
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)			
Ներդրումային արժեթղթերի առք/վաճառք և իրացում		(659,363)	(379,989)
Հիմնական միջոցների առք		(659,220)	(67,686)
Հիմնական միջոցների վաճառք		11,087	3,383
Ոչ նյութական ակտիվների առք ու վաճառք		(11,976)	-
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		2,012,779	-
Ձուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		693,307	(444,292)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		-	-
Բանկի կողմից բաշխված արժեթղթերի ավելացում (նվազում)		-	-
Բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		1,233,984	(1,902,612)
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		334,600	1,800,000
Ձուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		1,568,584	(102,612)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)		(8,854,522)	(3,033,603)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ		16,149,729	11,039,386
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և		668,723	1,723,754
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ		7,963,930	9,729,537



Մ.ՍՄԻՏՅԱՆ
Լ.ՍՄԻՏՅԱՆ